Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ Սիրանուշ Սահակյանի պատասխանները լրագրողների հարցերին (15 մայիսի, 2015թ.)

Սույն թվականի մայիսի 15-ին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի և ՀՀ Արդարադատության նախարարության միջև Համագործակցության հուշագրի ստորագրմանը հաջորդել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ Սիրանուշ Սահակյանի ճեպազրույցը միջոցառմանը ներկա լրագրողների հետ, որի սղագրությունը ներկայացնում ենք ԶԼՄ-ների ուշադրությանը:

Լրագրող -- Հայտարարագրման ընթացքին հետևելու ինչպիսի՞ մեխանիզմներ կան՝ հաշվի առնելով նաև այն, որ շատ բարձրաստիճան պաշտոնյաներ իրենց ունեցվածքը, հանքերը գրանցում են իրենց տիկնանց, որդիների կամ այլ հարազատների անուններով: Ի՞նչ մեխանիզմներ կան հասկանալու՝ այտդեղ ինչն է թաքնված:

Սիրանուշ Սահակյան -- Սկզբնական շրջանում մենք բացառապես հենվում էինք այն տեղեկատվության վրա, որը մեզ տրամադրում էր բարձրաստիճան պաշտոնատար անձը, քանի որ առանձին հարցումների ձևով, թեև, այդ տվյալների արժանահավատությունը ստուգելու հնարավորություն ունեինք, բայց դա արդյունավետ մեխանիզմն չէր: Ներկայումս պետական մարմիններում պահվող տվյալների հետ համադրելու ճանապարհով մենք կարողանում ենք պարզել, թե արդյո՞ք պաշտոնատար անձի տրամադրած տվյալը արժանահավատ է, համապատասխանում է իրականությանը, թե՝ ոչ: Այսինքն, այլ պետական մարմիններում պահվող տեղեկությունների համադրումը թույլ է տալիս թաքցնումները, կեղծումները, խեղաթյուրումները հայտաբերելու: Այլ անձանց (ծնողներ և այլն) հետ մենք ազգակցական կապեր կկարողանանք դուրս բերել նույն քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության բազաների միջոցով: Այնքանով, որքանով օրենսդրությունը հնարավորություն կտա մեզ անդրադառնալ նաև փոխկապակցված անձանց ունեցվածքին՝ այս հուշագրի ստորագրմամբ այդ գործիքակազմը կստեղծվի: Բայց եթե կլինեն օրենսդրական սահմանափակումներ, հասկանալի է, որ խնդիրները ամբողջական լուծում չեն կարող ստանալ:

Լրագրող -- Եղե՞լ են բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք թաքցրել են, և դուք հայտնաբերել եք: Եթե կարելի է, անուններ նշե՛ք: Տիկին Սահակյան, կարո՞ղ եք հիշել:

Սահակյան -- Մենք նոր նախաձեռնության մասին ենք խոսում, որով փոխկապակցվում է համակարգը: Հիմա կապերը կստեղծվեն և դրանից հետո մենք կօգտվենք այս գործիքից: Նախկինում չէինք կարող ստուգել, որովհետև այդ տեղեկատվությանը հասանելիություն չկար: Որոշակի տվյալներ մամուլում հրապարակվել են, բայց մենք քննչական գործառույթներ իրականացնող կառույց չենք և մենք ընդամենը տվյալների համադրությամբ կարող ենք կասկածներ դուրս բերել, իսկ դրանք հիմնավորելու պարագայում՝ նաև փոխանցել իրավապահ մարմիններին՝ հետագա քննությունն իրականացնելու: Եվ նաև մյուս ասպեկտը կցանկանայի ներկայացնել. մեր կողմից քննության իրականացումն ինքնանպատակ չէ. այսինքն՝ բոլոր այն

գործողությունները, որոնք մենք կատարում ենք, պետք է իրավական գործընթացի շրջանակներում որոշակի տրամաբանական եզրահանգման տանեն: Մեզ մոտ կեղծ տվյալներ ներկայացնելը քրեականացված չէ, անգամ՝ վարչական պատասխանատվության ենթակա արարք չէ:

Լրագրող -- Տիկին Սահակյան, փաստորեն նախորդ տարիներին, չնայած մամուլի բազմաթիվ հրապարակումներին այս կամ այն բարձրաստիճան պաշտոնյայի վերաբերյալ, կարող ենք ասել, որ որևէ դեպք չի արձանագրվել ձեր կողմից և իրավապահ մարմիններին որևէ դեպք չի ներկայցվել:

Սահակյան -- Մենք հատուկ կեղծիքներ բացահայտելու ուղղությամբ գործողություններ չենք կատարել, որովհետև մենք չունենք լիազորություն, գործառույթ, որպեսզի բացահայտենք պաշտոնատար անձանց կողմից թաքցրած եկամուտը: Մենք ունենք լիազորություն, գործառույթ՝ վերլուծել հայտարարագրերը և առաջարկությամբ հանդես գալ համապատասխան մարմիններին: Վերլուծության նպատակը կոռուպցիոն երևույթների տեսանկյունից ռիսկեր դուրս բերելն է: Մենք վերլուծություններ կատարել ենք և մի քանի ռիսկեր հիման վրա խնդիրն դուրս ենք բերել:

Լրագրող -- Կարո՞ղ եք անուններ նշել:

Սահակյան -- Անուններ չեմ կարող նշել, որովհետև դրանք ընդհանուր բնույթի են: Խնդիրների ձևով կարող եմ արձանագրել օրինակ համատեղ աշխատանքի խնդիրներ, երբ պաշտոնատար անձն աշխատում է իր ենթակայությամբ աշխատող մերձավոր ազգականի հետ, ինչը «Հանրային ծառայության մասին» օրենքի արգելքի խախտում է կամ նվիրատվությունների դեպքեր, որոնք իրենց մեջ ռիսկեր են պարունակում: Այդ ռիսկերի տեսանկյունից վերլուծություն եղել է:

Լրագրող -- Տիկին Սահակյան, օրինակ՝ Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարն անցած տարի 600 դոլար նվիրատվութուն է ստացել: Դուք դա ռիսկային չե՞ք համարում:

Սահակյան -- Կարելի է այդտեղ ռիսկեր տեսնել, բայց դա հետագա քննություն ենթադրող գործընթաց է, որը չի գտնվում Բարձաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի իրավասությունների շրջանակում:

Լրագրող -- Միգուցե, եթե ռիսկեր տեսնում եք, առաջարկությամբ ե՞ք պատրաստվում հանդես գալ:

Սահակյան -- Եթե մենք հիմնավորենք, մեր գործիքակազմը հնարավորություն տա ստուգել և պարզել, որ եկամուտի օրինականության, չհիմնավորվածության հետ կապված խնդիրներ կան, որը կոռուպցիոն հանցագործության է տանում, այս դեպքում մենք միգուցե հանդես գանք առաջարկությամբ: Մեր ձեռքի տակ եղած տվյալները բավարար չեն նման հետևության հանգելու և այդ գործն իրավապահ մարմիններին փոխանցելու համար: Իսկ իրավապահ մարմիններն այդ փաստի առնչությամբ բոլոր դեպքերում ինքնուրույն քննություն իրականացնելու հնարավորությունն ունեն: Մենք չենք կարող մեզ փոխարինել և իրականացնել իրավապահ

մարմիններին բնորոշ գործառույթներ և լիազորություններ: Մեզ վերապահված լիազորությունների շրջանակներում քայլերի հնարավորություն կա, որոնցից մեկն այս գործիքակազմի ստեղծումն էր և այդ ճանապարհով մենք ընթացել ենք:

Լրագրող -- Վարչապետի տիկնոջ և որդու ունեցվածքի առնչությամբ վերլուծություններ, ուսումնասիրությունների կատարվե՞ն են:

Սահակյան -- Մենք անհատական գործերով վերլուծություններ կատարելու ճանապարհով չենք գնում և նաև դրան է միտված վերլուծական էլեկտրոնային համակարգի ստեղծումը: Մենք ոչ թե առնչվում ենք անձերի, այլ՝ երևույթների հետ: Մենք դուրս ենք բերում ռիսկերը, ստեղծում ենք գործիքները, որից հետո համակարգը դա վերլուծելու է. այդ վերլուծությունն ամբողջացնելով՝ մենք նոր կարող ենք գալ և հանգել անձերի: Սկզբնական շրջանում մեզ համար հայտարարագրերի վերլուծությունն անձնավորված չէ: Եթե դուք ուսումնասիրեք Հանձնաժողովում հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանությունը, կտեսնեք, որ այդ անհատական տվյալները մեզ համար կարևորություն չունեն, որովհետև մենք դիտարկում և ուսումնասիրում ենք երևույթներ, որոնք կարող են ընկած լինել կոռուպցիայի հիմքում և դրանց կանխարգելման ճանանպարհով ենք ընթանում:

Լրագրող -- Ծառուկյանի մասով ի՞նչ է եղել:

Սահակյան -- Ինչի՞ հիմքով: Անձերի հետ կապված չի, որ մենք վերլուծություն ենք անում: Մենք ռիսկերի հիման վրա ենք վերլուծությունն իրականացնում, որտեղ սկզբնական փուլում վերացարկվում ենք անձերից: Շնորհակալություն: